

Ս. Բաղդասարյան

ԲԱՐԲԱՌԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Գեղարվեստական գրականության լեզվի հարցերը քննելիս ու մշակելիս հաճախ է սկզբունքային վեճերի առարկա դարձել բարբառների բառազանձի, լեզվաարտահայտչական միջոցների օգտագործման խնդիրը: Տարբեր ժամանակներում, գանազան առիթներով մղված բանավեճերի ու զրավեճերի ընթացքում արտահայտվել են ծայրահեղորեն տարբեր տեսակետներ ու կարծիքներ, սակայն երբեք չի ժխտվել գեղարվեստական գրականության մեջ հայերենի բարբառների օգտագործման հնարավորությունը, այլ ընդգծվել է դրանց խելացիորեն, չափավոր կերպով տեղ տալու անհրաժեշտությունը:

Մեր նույնատեղի չէ շարադրել այդ հարցի սխտեմատիկ ու մանրամասն պատմությունը, այլ՝ ետպատերազմյան հայ մանկապատանեկան գրականության ստեղծագործությունների օրինակների հիման վրա, ցույց տալ, թե հայ հեղինակները ինչպե՞ս են օգտագործում բարբառները, նրանց լեզվաարտահայտչական տարբեր միջոցները ու այդ ամենը ինչպե՞ս է անդրադառնում այս կամ այն ստեղծագործության լեզվի ու ոճի վրա:

Երբ այս տեսանկյունով քննարկման նյութ ենք դարձնում ետպատերազմյան մանկապատանեկան գրականությունը, նրա լեզուն, ապա նկատելի են դառնում հետևյալ օրինաչափություններն ու լինդհանրությունները:

Այդ շրջանի գրական շատ ստեղծագործություններ զերծ են բարբառայնության ամեն տեսակի արտահայտություններից, ինչպես Մ. Արմենի «Գույնը գզույն թագավորություն»¹ հեքիաթ վիպակը, Ա. Շալոբի «Երկիր մոլորակի զաղտնիքները»², «Տիեզերական օվկիանոսի կապիտանները»³, Կ. Ա. Սիմոնյանի «Կապարե մարդկանց զաղտնիքը»⁴: Ինչպես և Մ. Խերանյանի, Խ. Ղարիբյանի, Վ. Վարդանյանի, Արաքսի, Սարմենի, Հ. Ղուկասյանի, Կ. Հոգտանյանի և այլ հեղինակների մանկապատանեկան շատ ստեղծագործություններ:

Այս շրջանի մանկապատանեկան գրականության, նրա լեզվի մյուս բնորոշ կողմն այն է, որ կան գործեր, որոնցում բարբառային լեզվաարտահայտչական միջոցները օգտագործված են տեղին և հմտությամբ:

Ակնբախտորեն նկատելի է նաև, որ որոշ գրողներ իրենց երկերում տեղ են տալիս աննպատակ օգտագործված բարբառային բառերի ու բառաձևերի, որոնք միանգամայն անհարիր են ողջ ստեղծագործության լեզվի ու ոճի ոգուն:

Մանկապատանեկան գրականության մեջ կան նաև այնպիսի ստեղծագործություններ, որոնք ողողված են նեղ բարբառային բառերով ու արտահայտություններով, ոճերով ու դարձվածքներով:

1 Մ. Արմեն, Գույնը գզույն թագավորություն, Հայպետհրատ, Երևան, 1960:

2 Ա. Շալոբ, Երկիր մոլորակի զաղտնիքները, Հայպետհրատ, Երևան, 1960:

3 Ա. Շալոբ, Տիեզերական օվկիանոսի կապիտանները, Հայպետհրատ, Երևան, 1955:

4 Կ. Ա. Սիմոնյան, Կապարե մարդկանց զաղտնիքը, Հայպետհրատ, Երևան, 1959:

Բարբառները հմտորեն օգտագործելու լավագույն օրինակ է սովետահայ նշանավոր արձակագիր Ստ. Զորյանի «Մեր ծանոթները»⁵ ժողովածուն։ Այս ժողովածուի պատմվածքների մեծ մասում Զորյանը բարբառն ու նրա արտահայտչական միջոցները օգտագործում է հերոսների խոսակցական լեզվի մեջ՝ նրանց ավելի տիպականացնելու, կոլորիտ ստեղծելու համար։

«Գայլերը» պատմվածքում կառապանը պատմում է իր հետ պատահած մի դեպք։

«Ձմեռ է, ճամփեն ձյուն։ Ձյունն էլ ինչ ձյուն, ծնկահար նստած է, էլ բավական չի, քամին էլ մի կողմից է քշել, լցրել ճամփեն։ Գնում ենք, բայց վայ են գնալուն, սահնակը շուտ-շուտ խրվում է ձյունի մեջ, ցուրտն էլ... էնպես ցուրտ է՝ մարդու շունչը կտրում է, ձիերի պոչերից սառցի լուլաներ են կախվել։ Գոնե ամպած լինեք, էլի մի քիչ տաք կլինեք, բայց չէ—պարզկա զիշեր է. պարզ, աստղերը ճրագ-ճրագում են»⁶։

Ուշադիր նայելով ու կրկին անգամ կարդալով այս հատվածը, ամեն ոք կտեսնի, որ նրա լեզվի կատարյալ ժողովրդայնությունը պայմանավորված չէ մի քանի բարբառային բառերի ու բառաձևերի գործածությամբ։ Առանց ճամփա, լույս, էսպես, էնպես* բառերի էլ այն չէր կորցնի ժողովրդական լեզվով նկարագրության հմայքը, որովհետև հեղինակը ընկալել է հայ ժողովրդական խոսքի ոգին, էությունը, դրանց դրսևորման ձևերը։ Այս լեզվաբանական հմայքն է Զորյանի շատ ստեղծագործությունների ժողովրդական բարբառներից դեպի գրական լեզուն եկող բառ ու բանի, արտահայտությունների այնպիսի նմուշներ, ինչպիսիք են. շունչը կտրել, ճրագվառոց, վայ է՛ն գնալուն, միակտուր, ճացուփուր ծառայել, փոխեփոխ, պարզկա, ականջ դնել, ականջը ձենի, կալմեջ անել և այլն։ Զորյանի մանկապատանեկան գործերի հղված գրական լեզուն դարձրել են ավելի կենդանի ու տպավորիչ։ Ժողովրդական բառ ու բանին նա մեծ տեղ է տվել հատկապես «Հեքիաթներ»-ում⁷։ Միայն երկու «Փաջ նազար» ու «Հրաշալի սրինգ» հեքիաթում հեղինակը օգտագործել է. բախտը բերել, բախտը փորձել, օր ու արև չտալ, սիրտը փորն ընկնել, սիրտ չանել, աչքը վրեն փաղցր լինել, ոչ մեծ մնալ ոչ՝ փոքր, խալ խաղալ գլխին, մատը կծել, սրտի ուզածը, ուժը պատել, գլխին փորձանք բերել, վրան ջուր մաղել, աչք ու ունքը բացվել, փառ սիրտ, բանի դնել, ճար անել, լե՛ղին ջուր կտրել, ականջը հանգստանալ և այլն։

Հայերենի բարբառների, հատկապես իր մայրենի բարբառի օգտագործման, նրանց լեզվաարտահայտչական զանազան միջոցներով իր երկերի լեզուն ավելի արտահայտիչ դարձնելու հարցում մեր անվանի արձակագրի ընտրած ուղին շատ ուսանելի կոդմեր ունի մանկագիրների համար։

Ժողովրդական լեզվամտածողության տարրերը տեղին են օգտագործված հանրաճանաչ մանկագիր Հ. Հայրապետյանի հեքիաթներում, առակներում, գրույցներում ու, առհասարակ, այլ ժանրերի ստեղծագործություններում։ Այս ուղղությամբ Հ. Հայրապետյանը շարունակում է անմոռաց մանկագիրներ Հ. Թումանյանի ու, հատկապես, Խնկո-Ապոռ տրագիդիաները։

⁵ Ստ. Զորյան, Մեր ծանոթները, Հայպետհրատ, Երևան, 1952։

⁶ Նույն տեղում, էջ 44—45։

* Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են, ԼԹՆ չեն նշվում հեղինակային լինելով։

⁷ Ստ. Զորյան, Հեքիաթներ, Հայպետհրատ, Երևան, 1957։

Հ. Հայրապետյանի այնպիսի գործեր, ինչպիսիք են. «Ուղտն ու էշը», «Գալլը հարկահան», «Կկուն», «Ամենալավ երգիչը», «Մուկն ու առնետը», «Հայարտ աքլորը», «Իշի օգնությունը»⁸ և այլն վկայում են գրողի ազնիվ ձգտումը դեպի ժողովրդականը:

Ժողովրդական բառ ու բանի կարող օգտագործումը՝ մանկապատանեկան դրականության մեջ ուրույն տեղ են գրավում Ռ. Ղաբիրյանի ստեղծագործությունները: Այս դեպքում անհրաժեշտ է նշել զարմանք հարուցող այն ծայրահեղությունը, որն ականառու է 'Հարիրյանի ետպատերազմյան մանկապատանեկան ստեղծագործությունների լեզվում: Մի կողմից մշակված, գեղեցիկ ու հյութեղ լեզու, չափազանց հարուստ ժողովրդական լեզվամտածողության բազմաբանգ տարրերով, մյուս կողմից՝ թեև նույնպես անսխալ ու մշակված, բայց չոր ու անարտահայտիչ լեզու: Այս առումով շատ բնորոշ է «Զորս զրույց»⁹ գրքույկը, որի մեջ զետեղված երկերից «Փշկո նոնոն» լեզվի գունագեղությամբ, ժողովրդական բարբառներից եկող լեզվական լավագույն նմուշներով՝ ծայրահեղորեն տարբերվում է մյուսներից, հատկապես «Պատված լեզու» զրույցից: Հյութեղ լեզվով գրված, գեղեցիկ «Փշկո նոնոն» զրույցում, որը համեմատ է հումորի տարրերով, հեղինակը տեղ է տվել արյուն անել, տալ ու առնել, լեզվին տալ, փունջ ու պունձախ ընկնել, հստիվ մաքրել, դոնեբը գցել, վրա պրծնել, բերանն առնել, շուրջը մթնել ու նման այլ բազմաթիվ արտահայտությունների:

Ժողովրդական բառ ու բանի առատ օգտագործումը հատկանշական է Ղաբիրյանի մանկապատանեկան այլ ստեղծագործությունների համար, որոնք դրական դեր են կատարում մանուկների լեզվական ունակությունները զարգացնելու գործում: Կարդալով ու հեշտությամբ անգիր անելով այսպիսի գործերը, երեխաները, դրա հետ միասին, հիշողության մեջ են պահում ժողովրդական լեզվի լավագույն նմուշները, բառն ու բանը, թեև վոր, գեղեցիկ արտահայտությունները:

Ղաբիրյանը հայոց բառն ու բանը օգտագործում է նաև ամենափոքր տարիքի երեխաների համար գրված գործերում: Այդպիսի ստեղծագործություններից է «Լուսիկի կատուն» ոտանավորը: Ահա մի քառատող.

«Բժիշկ, բժիշկ, եկ մեր տուն,
Շատ հիվանդ է իմ կատուն,
Մի նառ արա, լավանա՝
Թե չէ ձեռքից կգնա»¹⁰:

Մանկապատանեկան այս շրջանի գրականության մեջ բարբառների արտահայտչական միջոցները չափավոր ու տեղին է օգտագործել Լ. Թարգյուլը «Թռչող ծաղիկներ»¹¹ գրքույկի «Այս նոր տարվա երեկոն» պատմվածքում:

Տոնածառի շուրջն են հավաքվել մշտադավար մանուկները. նրանք ցրնծությամբ տոնում են նոր տարին: Այդ առիթ է դառնում, որ հեղինակի մտքի առաջ հառնի իր հայրենի տունն ու տրտմաշուք նոր տարին: Հուշերը գրողին

⁸ Հ. Հայրապետյան, Ընտիր երկեր, Հայպետհրատ, Երևան, 1957:

⁹ Ռ. Ղաբիրյան, Զորս զրույց, Հայպետհրատ, Երևան, 1957:

¹⁰ Ռ. Ղաբիրյան, Արևի համայնություն, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 16:

¹¹ Լ. Թարգյուլ, Թռչող ծաղիկներ, Հայպետհրատ, Երևան, 1956:

տանում են հեռու, նա իր հետ տանում է ընթերցողին, տանում դեպի հայի անուրախ անցյալը, նրան համակում տրտմաթաթավ հոգեվիճակով: Պանդխտություն, զաղթ, համաճարակ ու մահ, ահա թե ինչ է տեսնում ընթերցողը անցյալի հոգեբեկ պատումներում:

Սահակը պանդխտություն է գնում. նրան իր մաղթանքի խոսքն է ասում մայրը. ահա այն.

«—Սահակ, շոր ջանս կանաչ արեիր մատաղ, արի մի երթա,—խնդրում էր տատս,—ինձ չէ եղնիկ կնկանդ, վիզ-ծուռ ձագերիդ խղճա, հեյ բալա... Երկու ամսվա հարս էի, որ հերդ ուրիշների պես ասաց. «Երթամ Ստամբուլ, բերեմ ոսկի բոլ»—համա ճամփեն չարաց երկուտակ, Արզրոմա տակ մեռավ»¹²: Կամ՝ «Աչքս վախեցել է, որդի, արի մի գնա, գիշեր-ցերեկ բուրդ մանելով և մքեզ պահել, ջահել-ջիվան կյանքս եմ դրել ոտքերիդ տակ, որ օր ծերության մեջ շվաքիդ ծվարեմ, ձեռքես մի թուշի դարիբ-դուշ բալա»¹³:

Այս հատվածները սրտառու են, տխրաբեր: Չոր ջանս կանաչ արեիր սատաղ, ճամփեն երկուտակ շանել, աչիք վախենալ, կյանքն ոտների տակ դնել, շվաքին ծվարել, ձեռքից թռչել, վիզը ծուռ ձագեր, կանաչ արև, գիշեր-ցերեկ հարադրություններն ու ոճերը բնորոշ լինելով մեր լեզվի բարբառների մեծ մասին դադարում են նեղ բարբառային, ուրեմն և՛ անհասկանալի լինելուց: Դրանք մտել են գրական լեզվի մեջ, դարձել նրա բառազանձի անքակտելի մասը:

Մեր լեզվի բարբառների հարստությունների օգտագործման հարցում խրախուսածքի արժանի ուղու վրա է կանգնած Ա. Դավթյանը «Նոր վարպետը»¹⁴ գրքույկի «Տեպանի բաժինը», «Քնած Օհանը», «Փեթակ Հանեսը», «Հին խոսք» պատմվածքներում: Այս ստեղծագործություններում նա բարբառը օգտագործում է հերոսներին տիպականացնելու համար՝ նրանց լեզվի մեջ, Հետաքրքրականն այն է, որ Դավթյանի՝ ծեր, գյուղական ծագում ունեցող հերոսները, հովիվները իրենց խոսքի մեջ ավելի քիչ են օգտագործում բարբառայնություններ, քան որոշ երկերի պատանիները, երիտասարդները, պիոներներն ու դրարոցականները, էլ չենք ասում մտավորականության ներկայացուցիչները: «Հին խոսքը» այս գրքույկի և ընդհանրապես հեղինակի լավագույն պատմվածքներից է: Այն ցույց է տալիս, թե ինչպես հեղինակը իր հերոսի խոսքը համեմտում է հումորով, դարձնում է տպավորիչ շնորհիվ ժողովրդական լեզվի տեղին ու խելացի օգտագործվող տարրերի:

Բառ ու բանի օգտագործման շատ օրինակներ են տալիս Ա. Դարբնու «Ծաղիկներ ու շաղիկներ»¹⁵ գրքույկը, հատկապես, առականների բաժինը, Մ. Կորյունի «Մանկական երկեր»¹⁶, Ս. Մուրադյանի «Մկնիկ հարսնացուն» գրքույկները¹⁷:

Անշուշտ, այս օրինակներով չեն սպառվում այն ստեղծագործությունները, որոնց հեղինակները իրենց լեզվում տեղ են տալիս հայերենի բառ ու բանին, ինչպես նաև ժողովրդական լեզվամտածողության այլ արտահայտու-

12 Լ. Քարգյուլ, Քոչող ծաղիկներ, էջ 38:

13 Նույն տեղում, էջ 39:

14 Ա. Դավթյան, Նոր վարպետը, Հայպետհրատ, Երևան, 1957:

15 Ա. Դարբնի, Ծաղիկներ ու շաղիկներ, Հայպետհրատ, Երևան, 1959:

16 Մ. Կորյուն, Մանկական երկեր, Հայպետհրատ, Երևան, 1959:

17 Ս. Մուրադյան, Մկնիկ հարսնացուն, Հայպետհրատ, Երևան, 1960:

թյուններին: Այդ առումով հիշատակության են արժանի Մ. Խերանյանի «Դարբնի որդին»¹⁸ գրքույկի շատ ոտանավորներ, Վ. Վարդանյանի «Ուլիկն ու պուլիկը», «Մեծի խոսքը»¹⁹, Վ. Տալյանի «Ագահ ուլիկները»²⁰, Հ. Սեվանի «Ուրախ երգեր»²¹, «Այծն ու աղվեսը»²² գրքույկների ոտանավորներից շատերը և այլն:

Ժողովրդական բառ ու բանի օգտագործումը երկի լեզուն հարստացնելուց բացի, ստեղծում է ազդայնի երանգ ու ինքնատիպություն:

* * *

Հայ ժողովրդի բազմերանգ ու բազմահարուստ բանավոր ստեղծագործությունների մեջ իրենց ուրույն տեղն ունեն առածներն ու ասացվածքները, պատկերավոր ու սեղմ ասույթները, որոնք սակավաթիվ բառերով արտահայտում են խորիմաստ ընդհանրացումներ: Մանկապատանեկան գրականության մեջ առականների ու ասացվածքների օգտագործմամբ խոսքը դառնում է ավելի հյուսված, դիպուկ ու սրբնթաց: Ժողովրդի բանավոր ստեղծագործության այդ հիաշարժ տեսակները գրականության միջոցով ընդհանրանում են, դառնում մատչելի, հարստացնում են գրական լեզուն ու ընթերցողների լեզվական ունակությունները, բառապաշարը. գեղարվեստական գրականության մեջ լայնորեն օգտագործվելով՝ նրանք ազատվում են մոռացման վտանգից:

Անշուշտ, ճիշտ չէր լինի, անտեսելով երկի նյութն ու թեման, հերոսների ծագումն ու էությունը՝ ամեն մի հեղինակից պահանջել առածների ու ասացվածքների օգտագործում, սակայն, գրողի երկերում միշտ էլ դրանք դիտվել ու դիտվում են որպես դրական երևույթ, որպես լեզվի հարստության, բազմերանգության արտահայտություններից մեկը: Կարդալով Պ. Պոռչյանի «Սոս և Վարդիթեր»-ը, Մ. Նալբանդյանը գրել է. «Արգո հեղինակը հետևելով Խ. Աբովյանի ուղղության, բովանդակ գրքի մեջ միշտ աչքի առաջ ունեցել է գործ դնել ազգային առածներ, ասացվածքներ: Մենք լիասիրտ շնորհակալություն ենք հայտնում հեղինակին»²³: «Ժողովրդական լեզվի ընտիր բառերը, սեղմ ու սերտ, պատկերավոր ոճերը, էսօր արդեն ամենաթանկ զարդերն են համարվում հայ գրողի երկերի մեջ»²⁴—գրել է Թումանյանը: Նույն առիթով նա գրել է, որ գրականության մեջ մշտական տեղ պետք է հատկացնել հայրենի երկրի ժողովրդական բանավոր դրականությանը, նրա ամեն տեսակ ավանդություններին, հեթաթեմներին, առականներին ու առածներին:

Այս առումով առանձնապես աչքի են ընկնում Վ. Անանյանի ստեղծագործությունները: «Որսորդական պատմվածքներ»²⁵, «Սևանի ափին»²⁶, «Մանկությունը լեռներում»²⁷, «Հովազաձորի գերիներ»²⁸ և այլ ստեղծագործություն-

18 Մ. Խերանյան, Դարբնի որդին, Հայպետհրատ, Երևան, 1959:

19 Վ. Վարդանյան, Ցայտադրյուր, Հայպետհրատ, Երևան, 1959:

20 Վ. Տալյան, Ագահ ուլիկները, Հայպետհրատ, Երևան, 1960:

21 Հ. Սեվան, Ուրախ երգեր, Հայպետհրատ, Երևան, 1956:

22 Հ. Սեվան, Այծն ու աղվեսը, Հայպետհրատ, Երևան, 1958:

23 Մ. Նալբանդյան, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1940, հ. 3, էջ 183:

24 Թումանյանը քննադատ, Հայպետհրատ, Երևան, 1939, էջ 395:

25 Վ. Անանյան, Որսորդական պատմվածքներ, Ա. Բ., Հայպետհրատ, Երևան, 1952, 1953:

26 Վ. Անանյան, Սևանի ափին, Հայպետհրատ, Երևան, 1953:

27 Վ. Անանյան, Մանկությունը լեռներում, Հայպետհրատ, Երևան, 1945:

28 Վ. Անանյան, Հովազաձորի գերիները, 1957:

ներում Անանյանի լեզուն հյուսիսը հն դարձնում առածներն ու ասացվածքները, որոնք շատ տեղին ու դիպուկ են օգտագործվում: Տաշած ֆարը գետին չի մնա, ծառը Պտուղից կը ճանաչվի, պտուղը ծառից հեռու չի ընկնի, Փորձված աղվեսը ջուխտ ոտով թալակը կընկնի, Ուղտը ու սատկի, կաշին մի իշի բեռ կլինի և այլ առածներով հարուստ են Անանյանի գործերը:

Ժողովրդական բանավոր ստեղծագործությունների այս ուշադրալարտահանող հայտնությունների օգտագործմամբ հետաքրքրություն են ներկայացնում Խ. Գյուլնազարյանի («Քաղաքի առավոտը»²⁹, «Կեսօր»³⁰, «Շաբաթը»³¹ պատանեկան վիպակները: Այդ երկերում տեղ են գտել. Լծր Լծի համար լավ ա, ֆանթ մի սուրու ոչխար, Մեղր լավով, պարտի տալով, Փորձանքը ու եկավ, դուռը փակես, երգիկից կմտնի. Խուփը գլուխ ա, պուտուկը գտել, Սարը սարին չի պատահի, մարդը մարդին կպատահի, Լավություն արա, ջուրը գցի և բազմաթիվ այլ առած ասացվածքներ: Այդ ստեղծագործությունները վկայում են, որ հեղինակը տիրապետելով մայրենի՝ Արարատյան բարբառին, այս դեպքում կարողացել է վերցնել այն, ինչ լավ է, գեղեցիկ, ինչ հարազատ է հայերենի բոլոր բարբառներին ու գրական լեզվին, հիմնականում խոսափել է նեղ բարբառային առածներ ու ասացվածքներ օգտագործելուց:

Առածներ ու ասացվածքներ օգտագործում է Հ. Ղուկասյանը իր պատանեկան վիպակներում՝ «Փոքրիկ վրիժառուներ»³², «Հասանի հիշատակարանը»³³ և այլ գործերում: Ահա դրանցից մի քանիսը. Չորացած առվով մի օր ջուր կգա. Խոսքը իմաստունին է սիրում, Շունը շնից, Երկուսը մի տեղից, Շատալիք հանդիպողին ուրախացնել բուրի խոսքով, գուցե Լի չհանդիպել, Պարանի ծայրը իր ետևից ֆաշ է տալիս մյուսը և այլն: Ինչպես ցույց են տալիս այս և ուրիշ օրինակներ, Հ. Ղուկասյանը օգտագործում է նաև արևելյան մյուս ժողովուրդների թեմատիկ արտահայտությունները, որոնք նրա ստեղծագործություններում ստեղծում են կոլորիտ: Անշուշտ, սեղմ, իմաստալից խոսքի այս ձևերի կիրառումը դրական երևույթ է մեր գրականության լեզվի մեջ: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ այդօրինակ ստեղծագործություններում կան անճշակ, նույնիսկ գոհարիկ արտահայտություններ, որոնք չպետք է տեղ գտնեն գեղարվեստական և՛ հատկապես, մանկաառատանեկան գրականության մեջ: Փորձումը մի բան է եռ գալիս, հենց գիտես թե նրազու է (Ս. Ա. 338) և նման արտահայտությունները անհարիր են մանկապատանեկան գեղարվեստական գրականության ոգուն: Հեղինակները պետք է խոսափեն նաև այնպիսի առածներ ու ասացվածքներ գործածել, որոնք թեև իմաստալից են, բայց բարբառային լինելով, իրենց հետ երկի լեզուն են բերում նեղ բարբառային բառեր ու բառաձևեր. օրինակ. Կծիկը ինչքան պտիտ գա, թելը մի վրեն կլի, էջն իշի կշտին կապես. յա գոալը կսովորի, յա ֆացի տալը (Խ. Գ., Կեսօր, 25, 102): Ընդգծված բարբառային բառերն ու բառաձևերը աղարտում են լեզվի մաքրությունը:

Գեղարվեստական գրականության լեզվի ժողովրդայնության հարցը խիստ էական հարց է: Հայերենի ինքնատիպ ու հետաքրքրական պատմությունը կոն-

29 Խ. Գյուլնազարյան, Քաղաքի առավոտը, Հայպետհրատ, Երևան, 1958.

30 Խ. Գյուլնազարյան, Կեսօր, Հայպետհրատ, Երևան, 1957.

31 Խ. Գյուլնազարյան, Շաբաթը, Հայպետհրատ, Երևան, 1959.

32 Հ. Ղուկասյան, Փոքրիկ վրիժառուներ, 1950.

33 Հ. Ղուկասյան, Հասանի հիշատակարանը.

կրետ օրինակներ է տալիս, թե ինչպես լեզուն կտրվելով ժողովրդից, աստիճանաբար վեր է ածվում զրքային լեզվի ու մահանում: Պուշկինը, Գուրկին, Աղայանը, Թումանյանը միշտ էլ կոչ են արել գրականության լեզուն ժողովրդայնացնել, ըմբռնել ժողովրդի լեզվի ոգին, նրա մտածակերպը և զրանով սլաքարել լեզվի զրքայնացման, շորացման դեմ: Պուշկինը բաղմիցս նշում էր, որ ժողովրդական լեզուն անկեղծ է, թարմ, սրտաբուխ, հասարակ ու կոնկրետ: Նա երիտասարդ գրողներին խորհուրդ էր տալիս կարգավ ժողովրդական հեքիաթները, լսել ժողովրդի խոսքը, որտեղ այնպիսի բաների կհանդիպեն, որոնք չկան ամսագրերում:

Թումանյանը իր երկերի՝ շոշափելիության աստիճանի կենդանի լեզուն ստեղծել է երկարատև, համառ աշխատանքով, ծրագրված ու մտածված: Նրա ստեղծագործությունների լեզվի մասին խոսելիս անհրաժեշտ է մոռացության չտալ, որ միշտ այդպիսին չի եղել այն, որ Թումանյանի լեզուն ունեցել է վերելքներ ու վայրէջքներ, տատանումներ ու սայթաքումներ ու դժվարին ճանապարհով հասել է ամեն մի ստեղծագործողի համար տենչալի բարձունքի:

Սովետահայ ականավոր լեզվաբան Գ. Սևակը «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն»³⁴ գրքի «Հովհաննես Թումանյանի լեզուն և ժողովրդայնության հարցը լեզվի մեջ» գլխում որոշակիորեն ուրվագծել է այն շրջանները, որոնցով անցել է մեծ բանաստեղծի լեզուն՝ մշակվածության նախանձելի աստիճանին հասնելու համար:

Պրոպագանդելով հայերենը ժողովրդականացնելու անհրաժեշտությունը, Թումանյանը նշում է, որ դրան հասնելու միակ ճիշտ ուղին ժողովրդական բարբառներն են: Սակայն, ցավալին այն է, որ մեզանում, վկայակոչելով անմահ բանաստեղծի՝ հայերենի բարբառներն օգտագործելու տեսակետները՝ մոռացության չեն մատնում շափազանց կարևոր այն հանգամանքը, որ Թումանյանը, այդ կարծիքները հայտնելիս, միշտ ընդգծում էր բարբառները շափավոր օգտագործելու, տեղին օգտագործելու, խելացի օգտագործելու անհրաժեշտությունը:

1910 թվականին կարդացած մի դասախոսության մեջ նա ասում էր.

«Ես չեմ ասում զուտ բարբառով գրեցեք ձեր հոդվածները, բայց մեծ իրավունք տվեք բարբառներին, նրանց բառերին, ոճերին ու ձևերին: Իհարկե, շնորհիվ բան է, թե ով լսչքան ու ինչպես կօգտվի էդ կենդանի աղբյուրներից»³⁵, Մի այլ առիթով նա ասում է. «Ես այն կարծիքին եմ... որ գրողը իր լեզուն հարստացնելու, կազմելու համար ազատ է օգտվելու էդ բոլոր աղբյուրներից (իմա՝ գրական լեզու, գրաբար, բարբառներ, օտար լեզուներ—Ս. Ք.), միայն թե պետք է իմանա շնորհիվ, խելացի օգտվել ու տեղը գործածել»³⁶: Այսպիսով, միանգամայն պարզ է, որ նույնիսկ այն շրջանում, երբ Թումանյանը առաջ էր քաշում բարբառներին ազատություն տալու, գրականության լեզվի դոները նրանց առաջ բացելու իր շափազանցված տեսակետը, նույնիսկ այդ շրջանում, դրան հավասար ընդգծում էր շնորհիվ, խելացի օգտագործելու, տեղը գործածելու անհրաժեշտության պահանջը:

Այս կարևորագույն պահանջի անտեսման բազմաթիվ օրինակներ են տալիս ետպատերազմյան մանկապատանեկան գրականության շատ ստեղծագոր-

34 Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948:

35 «Թումանյանը քննադատ», էջ 141:

36 Նույն տեղում:

ծուծություններ: Այդ երկերի հեղինակները տարվելով լեզուն ժողովրդականին՝ մոտեցնելու գովելի, խրախուսանքի արժանի ձգտմամբ, բայց ուղիների մասին ունենալով անընդունելի տեսակետ, իրենց գրվածքների լեզուն ողողում են նեղ բարբառային բառերով ու բառաձևերով, ոճերով ու դարձվածքներով՝ հասնելով այնտեղ, որ մաքուր ու մշակված, ժամանակակից դրական հայերենի փոխարեն մանուկ ու պատանի ընթերցողներին է տրվում գավառաբանությանը լեզուն մի խառնալեզու:

Այդպիսի լեզուն առհասարակ մերժելի լինելով դեղարվեստական գրականության մեջ, խստորեն պետք է բացառվի մանկապատանեկան երկերում: Մանուկ ու պատանի ընթերցողների մոտ բացակայում է քննադատական վերաբերմունքը դեպի հեղինակների գրվածքների լեզուն: Նրանք ընկալում են այն, ինչ տրվում է: Այս շրջանի լեզվական տպավորությունները հաճախ հարատևում են, ահա թե ինչու լեզվի մաքրության հարցերը ամենից շատ պետք է հուզեն ու հետաքրքրեն այն հեղինակներին, որոնք գրում են մանուկների ու պատանիների համար:

Լեզվի զարգացման ներկա էտապում ստեղծագործողը բարբառներին կարող է դիմել հերոսների ոճն ու խոսելաձևը մշակելիս՝ նրանց տիպականացնելու նպատակով, սակայն, երբ այս կամ այն երկի մի քանի հերոսներ միաժամանակ, կամ հերոսների մեծ մասը խոսում է բարբառով, ապա լեզվաարտահայտչական այդ հնարքը կորցնում է իր նշանակությունը և բացասական հետևանք է տալիս: Լեզվի այդ բացի դեմ պիտի պայքարի ամեն ոք, ում համար թանկ է մայրենի լեզվի անաղարտությունը, մայրենի լեզվի բախտը: Այդ բացի դեմ ամենից առաջ պետք է պայքարի գրողը:

Ինչպես արդեն նշեցինք, Խ. Գյուլնազարյանը այս շրջանում այլ գրքերի հետ միասին մանուկ ու պատանի ընթերցողների համար հրատարակել է նաև «Քաղաքի առավոտը», «Կեսօր», «Ծաղրերում» գրքերը: Երկերի թեմաս հետաքրքրական է. նկարագրվող ժամանակաշրջանների տեսակետից մեկը մյուսի շարունակությունը լինելով՝ նրանք պատանի ընթերցողներին պատմում են հայ ժողովրդի, Երևանի նախասովետական, ապա նաև սովետական շրջանների մասին: Ընթերցողը տեսնում ու զգում է այն հակադրությունը, որ գոյություն ունի հին ու նոր կարգերի, հատկապես այդ կարգերում ապրող երեխաների, պատանիների կյանքում: Սակայն տվյալ դեպքում հետաքրքրության առարկան վերոհիշյալ ստեղծագործությունների լեզուն է, իսկ ավելի կոնկրետ ասած այն հարցը, թե հեղինակը ինչպե՞ս է օգտագործում հայերենի բարբառները:

Հենց սկզբից պետք է ասել, որ Գյուլնազարյանը, որը մինչ այս դրծերի լույս տեսնելը հրատարակել է մաքուր գրական հայերենով գրված պատմվածքներ, վերոհիշյալ գրքերում այնքան է հրապուրվում բարբառներով, որ որոշ գործերում նույնիսկ պատահական մարդիկ, որոնք մեկ անգամ են հանդես գալիս և որոնց մասին ընթերցողը գրեթե ոչինչ չգիտե՝ խոսում են բարբառային լեզվով: Ահա մի քանի օրինակ.

«—Հմի ղորդ ու բեշ պիտի անեն,—բմծիծաղ տվեց մի ինչ որ գեր մարդ»³⁷։
«Ուստա, պրծի է, վռազ եմ,—դժգոհում էր հաճախորդը»³⁸։

³⁷ Խ. Գյուլնազարյան, Քաղաքի առավոտը, էջ 47։

³⁸ Խ. Գյուլնազարյան, Կեսօր, էջ 17։

«—Ի՞նչ ես անում, տո ախմախ³⁹,—ասում է փողոցով անցնող մի մարդ»։ Բարբառով են խոսում ն. Եյուլնաղարյանի հերոսներից շատերը։ «Քաղաքի առավոտը» վեպի պատանի հերոսներից Պողոսը, դպրոցական արձակուրդների օրերին դնում է ճամբար։ Կայարանում բնկերներին հրաժեշտ տալու ժամանակ նա ասում է.

«—Վարժապետ, ձկո, էս ա ես դնում եմ, մուղաթ կկենաք դշերիս։ Մկոն լակոտ ա (Պողոսի վեցամյա եղբայրը, որին համապատասխան ինստրուկտաժից հետո հանձնված էր աղավինների խնամքը), մտիկ կանեք նաշիկը դշերիս չբռնի»⁴⁰։ Տղայի մայրը ճանապարհելիս ձայնում է. «—Աման, Պողոս, ումուդ, մաշիկից վեր չբռնես»⁴¹։

Այնուհետև. «—Ձենդ կտրի, քավթառ,—շուռ եկավ նա (չրանուշը) դեպի Մայրամ բաջին։ «—էյ, լաշառ, հերիք էղավ,— անսպասելի բարձր ձայնով գոռաց գհուլի Ղազարը,—ինչ ես բերանդ շաղ տալիս»։ «Տո ես քու... սուղած շան որդի»⁴²։ «—Ախմախ,—ջղայնանում էր դհուլի Ղազարը,—լակել ես, գնա շնթոխ»⁴³։

Վեպի հերոսներից մեկը՝ պարոն Ռաֆայելը, ներս է մտնում իրենց բակը. բնակիչները այնպես աղմուկ են բարձրացրել, որ կարծես բակը թիթեղագործի խանութ է։ Ռաֆայելը ասում է.

«—էս ինչ ղալմաղալ ա, տո, ի՞նչ եք հայաթի սարքել ժեշտանշու դուքան»⁴⁴։

Վեպի մի այլ հերոսի՝ Մայրամ բաջու պատմած մի հեքիաթից հեղինակը մեջ է բերում մի շատ փոքր հատված. այդ հատվածում գործ է ածված. ժնջիլ, ամանաք, էքամ, տենամ, կենալ, պտի ու այլ բառեր, բառաձևեր⁴⁵։

Լեզվական նման ըմբռնմամբ է գրված «Կեսօր» գիրքը։

«—Ի՞նչ եմ արել, է,—լացակումած ասացի ես։

—Չոռը պինշդ ես արել,—վրա բերեց մայրս,—նոր վարժուհիդ էստեղ էր...»⁴⁶։

Նույն լեզվով է խոսում հայրը. «—Աղա, դու էդ ի՞նչ ղալաթ ես արել»⁴⁷։

«Պահ, պահ, պահ, ման օլում, իշից վեր արի, ոտով էթանք»⁴⁸—ասում է դպրոցի պահակ Բաղդասարը Գազեթ Մարդարի ետևից, երբ նա հրաժեշտ տալով հեռանում է։ Դավառաբանություններով ողողված է նաև հիվանդանոցի պահակի լեզուն. «—Վայ, էս ինչ բիաբուռ տղա ա տո, աղա, բա քու երեսին մեռոն չկա»։ «—Աղա չի կարելի, աբխոդ ա, է, աբխոդ, ըսենց էլ երեխա գրլի»⁴⁹։

«Կեսօր» գրքում օգտագործված են. պտի, դինջանալ, յանի բշտել, դաղել, նեֆս, սնաք, լածիրակ, օրիլ, աղա, բեֆայմ, քայ, բիաբուռ, կլեմ, դոռոգ, խաբարդա, քաղարեֆ, քարեֆ, քաշել, դրկել, հայաք, նավդան, դուֆան, յարա, նաֆաս տուր, շաֆշով, միրֆով, խալիս, հաքաքա տալ, ֆուշա, ղալաք և այլն։

39 Ն. Եյուլնաղարյան, Կեսօր, էջ 24։

40 Ն. Եյուլնաղարյան, Քաղաքի առավոտը, էջ 44։

41 Նույն տեղում, էջ 43։

42 Նույն տեղում, էջ 32։

43 Նույն տեղում, էջ 94։

44 Նույն տեղում, էջ 96։

45 Նույն տեղում, էջ 83։

46 Ն. Եյուլնաղարյան, «Կեսօր», էջ 26։

47 Նույն տեղում, էջ 34։

48 Նույն տեղում, էջ 37։

49 Նույն տեղում, էջ 111։

Որոշ հեղինակներ երբեմն մոռանում են, որ լեզվին «ժողովրդայնություն տվողը բարբառային բառերը չեն, այլ հարազատ, ժողովրդական լեզվամտածողությունը, պարզ, ոչ շինծու լեզուն, որ տրվում է հարազատ ժողովրդի կենդանի խոսքի ուշադիր դիտումով և հմուտ օգտագործմամբ»⁵⁰։ Ինչ վերաբերում է բարբառային լեզուն որպես տիպականացնող հնարք օգտագործելուն, ապա այստեղ այն դադարել է այդպիսին լինելուց։

Հասարակության լայն շրջաններին հայտնի է Վ. Անանյանի անունը՝ նա շնորհակալ գործ է կատարել մանուկ ու պատանի ընթերցողներին հետաքրքրական գրքեր տալու գործում։ Քննարկման նյութ հանդիսացող ժամանակահատվածում Անանյանը հրատարակել է բազմաթիվ գործեր. «Դժոխքի դռան գաղտնիքը»⁵¹, «Որսորդական պատմվածքներ» Ա. Բ., «Սևանի ափին», «Մանկություն լեռներում», «Լեռնային արահետներով»⁵², «Հովազաձորի գերիները»⁵³ և այլն։ Անանյանը այն մանկագիրներից է, որոնք իրենց ստեղծագործությունների լեզուն մշակելիս ցուցաբերում են ուրույն տեսակետ ու մոտեցում։ Անանյանի երկերի լեզուն, հիմնականում, մշակված ու կանոնավոր գրական հայերենն է՝ ժողովրդական լեզվաարտահայտչական միջոցների տեղին ու չափավոր օգտագործման հետևանքով ձեռք բերված—լեզվի ճկունությամբ ու պատկերավորությամբ հատկանշվող։ Սակայն, երբեմն, չցանկանալով գնալ տրորված ճանապարհով, նա ընկնում է ծայրահեղությունների մեջ։ Հետևանքը լինում է այն, որ նրա գործերում տեղ են գտնում անհարկի օգտագործված նեղ բարբառային բառեր ու բառաձևեր։ Նրա շատ հերոսները՝ պիոներ ու դպրոցական, կոլտնտեսության ղեկավար աշխատող ու գյուղացի, ուսուցիչ ու մտավորական, հաճախ, խոսում են բարբառով, բարբառախառն լեզվով։

Այս տեսակետից բնորոշ է հեղինակի «Սևանի ափին» վիպակը, որն իր լեզվով հիմնականում տարբերվում է «Որսորդական պատմվածքներ»-ից։ Անկասկած, որքան տարբեր ու բազմազան են գրողի լեզվաարտահայտչական միջոցները, այնքան կենդանի է նրա լեզուն։ Սակայն, հարցը նրանումն է, թե ի՞նչ սահմանների, ինչ կետերի մեջ են ամփոփվում այդ բազմազանությունները։ Բոլոր դեպքերում ստեղծագործության հիմքում պետք է ընկած լինի ժամանակակից գրական հայերենը. Վ. Անանյանը «Սևանի ափին» վիպակում թողած մեր գրական լեզվի լայն ու լուսավոր պոզիտիվ, երբեմն քայլել է սկսում կեռամաններով ու արահետներով, որը հայերենի համար անցած ուղի է։

«Սևանի ափին» վիպակի հերոսներից Գրիգորը խելացի, ընդունակ աշակերտ է. հարուստ, բազմակողմանի գիտելիքներ ունենալու պատճառով ընկերները նրան «գիտնական» մականունն են տվել, բայց նրա խոսքը բարբառային է։

«—Ձեզ մատաղ, մնացած ձվերն էլ փշրվեցին, ճուտեր են դուրս գալիս, ռանգ-ռանգ, ոնց որ ժժմունք»⁵⁴։ Արծվի ձագի մասին խոսելիս Գրիգորն ասում է. «էդ անիրավը քիչ էր մնում դմակս պոկի»⁵⁵։

50 Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, էջ 124։

51 Վ. Անանյան, Դժոխքի դռան գաղտնիքը, Հայպետհրատ, Երևան, 1945։

52 Վ. Անանյան, Լեռնային արահետներով, 1956։

53 Վ. Անանյան, Հովազաձորի գերիները, 1957։

54 Վ. Անանյան, Սևանի ափին, էջ 269։

55 Նույն տեղում, էջ 185։

«Մի թուխսը վեր քաշի... վի, ինչքան լավն են», «բայց թե ժամունք է»⁵⁶. նման ձևերով լի է դպրոցական Հասմիկի լեզուն:

Արամ Հակոբյանը ավարտել է պատմության ֆակուլտետը, ուսուցիչ է, բայց ահա նրա խոսքից մի նմուշ. «—օհո, մի դեսը մտիկ արեք, սա հո վայրի այծի վեգ է»⁵⁷, Մի՞թե համալսարանավարտ, պատմության ուսուցիչը կարող է այսպես խոսել: Զավգակ, դմրո, տվավ, բերավ, շանչ արավ, փոմփոլ, աղլուխ, պլոնիկ, պելվել, նպոռ և շատ ուրիշ բարբառային բառեր ու բառաձևեր, ոճեր ու արտահայտություններ բնորոշ են «Սեանի ափին» վիպակի հերոսների ու հեղինակի լեզվի համար: Նման բարբառային բառերի հանդիպում ենք նաև «Մանկությունը լեռներում» գրքում:

Բարբառային բառեր ու բառաձևեր են օգտագործում նաև այլ հեղինակներ իրենց մանկապատանեկան երկերում. այսպես, օրինակ. ջուխտ, տվավ, բալա, ցաֆատ⁵⁸, ֆոիկ, նան, նիժ, թուլացավ, եսուն, դրկել, րնցնել⁵⁹:

Ի՞նչով բացատրել, որ հեղինակը օգտագործում է խոսնուն բառը, երբ խոսքը մաղերին է վերաբերում, բայց ծառի մասին ասում է զանգրահեր⁶⁰:

Ա. Շահինյանի՝ նաև լեզվական առումով ուշագրավ «Սուրի և Սամի արկածները» գրքում տեղ են գտել. խորոզ, իրեն ուռացնել, լոպագ, դանթել, վոագ, քրաշ, բսնած, րտենց, լոշտակ, շանգյալ, տրաֆացնել, խաբաբ, խաբախուռա և այլն: Կասկած լինել չի կարող, որ շնորհալի մանկագրի երկի լեզուն, շատ ավելի մաքուր ու մշակված կհամարվեր, եթե նրանում տեղ չունենար լեզվական վերոհիշյալ «խարախուռան»՝ հնոտիքը:

Մտնկական գործերում բարբառային բառեր են օգտագործում նաև Խ. Հրաչյանը, Պ. Խաչատրյանը, Այվազյանը, Ս. Օրբելյանը և այլ հեղինակներ, սակայն նրանց գործերում օրինակները եզակի են, որակ չեն կազմում. իրենց լեզուն դրանցից մաքրելը մեծ ջանք չի պահանջի հեղինակներից:

Ժխտել գեղարվեստական գրականության մեջ բարբառային լեզվամթերքի օգտագործման հնարավորությունն՝ առհասարակ ու ընդհանրապես, նշանակում է դեմ լինել լեզվի ժողովրդայնացման առաջադիմական ձգտմանը, սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, բարբառների նման կիրառումը հայոց լեզվի զարգացման այս շրջանում վնասում է հայերենի իմաստային ճշգրտությունը, մաքրությունը:

Գեղարվեստական գրականության մեջ բարբառների օգտագործման հարցի մասին խոսելիս, ինչպես նշեցինք, հաճախ հիշատակվում է Թումանյանի անունը, որը խրախուսում էր բարբառներին ազատություն տալու գաղափարը: Այսպիսի դեպքերում, ինչպես տեսանք, բարբառները տեղին, չափավոր ու խելացի օգտագործելու մասին արված նրա բազմաթիվ զգուշացումների հետ միասին մոռացության է մատնվում պատմական մոտեցումը: Թումանյանը բարբառներին ազատություն տալու, գրականության, նրա լեզվի դոները բարբառների առաջ բաց անելու հարցը առաջ էր քաշում մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մեր գրական լեզուն աղքատ էր, մշակված չէր, երբ ամեն

56 Վ. Անանյան, Սեանի ափին, էջ 100:

57 Նույն տեղում, էջ 105:

58 Հ. Միքայան, Պատմվածքներ (փոքրերի համար), 1946:

59 Ս. Սարգսյան, Քուրդիկ ջալալին, 1946:

60 Զ. Դարյան, Իմ առավոտը, Հայպետհրատ, Երևան, 1949:

մի բարբառ ավելի ուժ ունեն, կենդանություն ունեն իր մեջ, քան դրական լեզուն. խոսք տանք Թումանյանին.

«...անտես մի անեք կամ վերեկից մի նայեք էն գավառների կենդանի բարբառներին, որոնց մեջ դուրս եք եկել գործելու էդ բարբառներից ամեն մինը ավելի ուժ ու կենդանություն ունի իր մեջ, քան մեր եղած գրական լեզուն: Սա դեռ չի կազմակերպված ու չի էլ կազմակերպվելու, մինչև մեր ժողովրդի լեզուն իր բոլոր դաշտերից ու սարերից ու ձորերից կենդանի վտակներով կգա միանալու նրա մեջ և բոլոր բարբառները հանդես բերեն իրենց գանձերը»⁶¹: Մի այլ առիթով նա գրում էր. «Լեզուն հո... գրականության մեջ անկազմ ու անկերպարան, մամուլի մեջ աղքատ, ողորմելի մի երկու-երեք հարյուր բառերի շոր ու ցամաք շարան, շատ անգամ էլ ծուռ ու սխալ».
«դեռևս վերջնականապես չի կազմակերպված հայոց լեզուն, դեռ շատ վիճելի խնդիրներ ու խախուտ կողմեր ունի իր մեջ»⁶² և վերջապես՝ «...դրված է մեր գրական լեզուն վերջնականապես մի ճանապարհի վրա հաստատելու, մի անգամ ընդմիշտ նրա բնավորությունն ու սահմանները որոշելու խնդիրը»⁶³.
«...ամեն մի գրող ընտրում է իր համար մի ճանապարհ»⁶⁴:

Ահա թե նաև ինչով է բնորոշվում հայոց լեզվի այն շրջանը, որի մասին խոսում է Թումանյանը: Պարզ է, երբ լեզուն դեռ չի կազմակերպված, երբ շատ վիճելի խնդիրներ ու խախուտ կողմեր ունի, քանի դեռ չի լուծված գրական լեզուն վերջնականապես մի ճանապարհի վրա հաստատելու, նրա բնավորությունը, սահմանները որոշելու խնդիրները, ապա բնական է, որ արտահայտվեն տարբեր տեսակետներ ու ամեն մի գրող էլ ընտրի մի ճանապարհ՝ նայած թե ինչպես է ըմբռնում ու ինչ ճանապարհով է տանում լեզվի մշակումը: Հա՛ ազգային լեզվի կազմավորման հետ հիմնականում ավարտվել է բարբառների բառամթերքի, լեզվաարտահայտչական այլ միջոցների հաշվին գրական լեզուն հարստացնելու պրոցեսը: Բարբառներից հայոց գրական լեզուն են մտել ու նրա անբաժանելի մասն ու հարստություններից մեկն են կազմում անթիվ ու անհամար հարադրություններ, ոճեր, դարձվածքներ, բառեր:

Այսօր գրական հայերենը պետական լեզու է, մամուլի, բարձրագույն դպրոցների, գիտության ու տեխնիկայի լեզու: Այն վաղուց արդեն որոշել է իր բնավորությունն ու խնդիրները, հաստատվել մի ճանապարհի վրա:

Գեղարվեստական գրականությունը յուրահատուկ դարբնոց է, որտեղ գրողը մշակում ու հարստացնում, մաքրում ու կանոնավորում է մայրենի լեզուն: Նա, անշուշտ, կարող է շեղվել համազգային լեզվից, բայց նման դեպքերում անհրաժեշտ է պահպանել չափի զգացումը:

Գրողի ճիշտ կամ սխալ տեսակետը տերիտորիալ բարբառների լեզվական, միջոցների օգտագործման մասին, իր դրական կամ բացասական կնիքն է դնում լեզվի որակի վրա, հետևապես, օգնում կամ վնասում է լեզվի, մշակույթի զարգացման, ընթերցողների լեզվական ունակությունները, գիտելիքները զարգացնելու, հարստացնելու գործին: Ահա թե ինչու այն չպետք է վրիպի քննադատության ու հատկապես, լեզվաբնագատության ուշադրությունից:

⁶¹ Թումանյանը *Բնագատ»,* էջ 140—141:

⁶² Նույն տեղում, էջ 135:

⁶³ Նույն տեղում, էջ 385:

⁶⁴ Նույն տեղում, էջ 163: